մաքսաւոր՝ և ապա քարոզ կենաց։ Այլ և յաղագս կորովութեան իւրոյ՝ կարդէր ի զինուորութիւն զաւրավարին Ցունայ, և անդ բարիոք երևէր։ Աշակերտէր Կարապետին. ոչ զրկէր՝ և ոչ խրէր, այլ ասկեալ[ա] Թոշակաւն շատանայր, և ընդ ամենայն հասակս և արհեստս անարատութեամբ անցանէր՝ որպէս Տէրն իմ և Աստուածն Յիսուս։ Եւ յորժամ զփորձ էառ ամենայնի որ ինչ հեշտալի է կենցաղոյս և ըղձալի բազմաց, որպէս Եկկէսեասատէան ի նախնումն. և ծանեաւ թէ ունայն և սնոտի է զոր Ջանան մարդիկ ստանալ ի ներքո արեգական, և յիշեաց զբանն Տեառն. դժուարաւ մտանել փարթամաց ի սեփհական ժառանգութիւնն աղքատաց՝ վասն զի ոչ մերկանան յընչիցն. և որ ոչ հրաժարէ յամենայն ընչից իւրոց ոչ է պաշտաւնեա նորա։ Սակըս որո լքեալ զամենայնն՝ և կըզկղանս համարեալ՝ և պատճառ գլորման և մահու, զոսկի և զարծաթ՝ զակունս և զմարգարիտս, զբեհեզն և զկերպասն, զերիւարս պահրացիս՝[բ] և զՅորիս երիկամազիս, ըզզէնսն և զկազմածսն որք զբաւսանք են կենցաղոյս։ Եւ զփառս թագաւորաց և զպատիւս իշ-

---

ա. Զկայ Ն. Հ. Բ.։

բ. Զկայ Ն. Հ. Բ.։